# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

### Իջևան քաղաքային համայնքի ավագանի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*24 օգոստոսի 2012թ. N 21*

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել համայնքի ավագանու օրակարգը

2. Իջևան համայնքի տարածքում 2012թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին
3. Իջևան համայնքի տարածքում 2012թ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հաստատելու մասին
4. Իջևան համայնքի վարչական սահմաններում վարձակալությամբ օգտագործման տրամադրվող հողատարածքների վարձավճարներ սահմանելու մասին
5. Իջևանի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող տարածքների աճուրդային վաճառքի մեկնարկային գին սահմանելու մասին
6. Իջևան համայնքի ավագանու 05.06.2012թ թիվ 3-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին
7. Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ ու լրացումներ կատարելու և նոր հաստիքացուցակը հաստատելու մասին
8. Իջևան համայնքի 2012թ բյուջեի ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելու մասին
9. Քաղաքապետարանի ենթակայության ,,Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն" բյուջետային հիմնարկի համար ,,Բելոռուս" ԷՕ-2621 մակնիշի էքսկավատոր ձեռք բերելու և հիմնարկի հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու մասին
10. Քաղաքապետարանի կարիքների համար գույքի ձեռքբերման մասին
11. Քաղաքապետարանի ենթակայության ,,Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն" բյուջետային հիմնարկի համար գույքի ձեռքբերման մասին
12. Իջևան քաղաքի Մեհրաբյան 42 հասցեում գտնվող առանձնատունն ամրացնելու և հիմնանորոգելու համար ֆինանսական աջակցություն ցույց տալու մասին
13. ,,Քաունթեփարթ" ինտերնեյշնլ հայաստանյան կազմակերպության և Իջևանի քաղաքապետարանի համատեղ ծրագրի աշխատանքների մասին
14. ,,Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն" բյուջետային հիմնարկի տնօրեն նշանակելու մասին
15. Իջևան քաղաքի մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցերի հիմնանորոգման մասին
16. Համայնքի սեփականությունը հանդիսացող Երիտասարդական փողոցի թիվ 7 շենքի, թիվ 42 բնակարանը անհատույց օտարելու մասին

17. Համայնքի սեփականությունը հանդիսացող Նալբանդյան փողոցի թիվ 20 շենքի, թիվ 14 բնակարանը անհատույց օտարելու մասին
18. Համայնքի սեփականությունը հանդիսացող Մետաղագործների փողոցի թիվ 11 շենքի, թիվ 4 բնակարանը անհատույց օտարելու մասին
19. Համայնքի սեփականությունը հանդիսացող Բլբուլյան փողոցի թիվ 73 շենքի, թիվ 36 բնակարանը անհատույց օտարելու մասին
20. Իջևանի թիվ 5 մանկապարտեզում նոր խումբ բացելու և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու մասին
21. Տեխնիկական աղի ձեռքբերման մասին
22. Մշակույթի տան հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին
23. Թիվ 1 մանկապարտեզի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին
24. Քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնակամ շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, հողամասերի գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ
ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ
ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆ[illegible] ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*24 օգոստոսի 2012թ. N 22-Ն*

## 2. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական տուրքերի և վճարների մասին" ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով.

***Իջևանի համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Իջևան համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

*ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ*

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300քմ մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ:

բ/ սույն կետի „ա"ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ:

բբ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ:

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ:

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:

բ/ բացի օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում՝ կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի՝ա՝ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են

նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում `ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:

4.Համայնքի տարածքում ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է եռամսյակի համար 3000 դրամ:

5.Ծխախոտի արտադրանքի վաճառքը թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է եռամսյակի համար 3000 դրամ:

6. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար 150000 դրամ

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանվում է

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000 դրամ

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 3000 դրամ

գ/ այլ արտաքին գովազդի համար 1500 դրամ

դ/ դատարկ գովազդային վահանակների համար 700դրամ

8. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները, խաղատները/ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ, բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000 դրամ, գ/ բաղնիքների /սաունաների/ համար 200000 դրամ, դ/խաղատների կազմակերպման համար 600000 դրամ, ե/ շահումներով խաղերի կազմակերպման համար 350000 դրամ, զ/վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

9.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ:

10.Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000 դրամ

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000 դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ

չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց՝ 3000 դրամ փոխհատուցման վճար:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար 15000դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԱՋԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*24 օգոստոսի 2012թ. N 23-Ն*

3. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012Թ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

„Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 19-րդ կետի, 37-րդ հոդվածի և 60-րդ հոդվածի պահանջներով

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:

*ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ*

1. Բնակելի ֆոնդի բնակվարձ և սեփականաշնորհված բնակարանների սպասարկման վարձ 1 քմ ընդհանուր մակերեսի համար՝ ամսական

ա/ չսեփականաշնորհված բնակելի ֆոնդ՝ 15 դրամ

բ/ սեփականաշնորհված բնակելի ֆոնդ՝ 10 դրամ:

2. Սեփականաշնորհված ոչ բնակելի տարածքների և այլ նպատակներով օգտագործվող բնակարանների ընդհանուր մակերեսի 1 քմ համար ամսական՝ 25 դրամ:

3. Բազմաբնակարան շենքերի համար պարտադիր իրականացման են ենթակա հետևյալ միջոցառումները և աշխատանքները՝

ա/ կենցաղային և կոշտ թափոնների հեռացում՝ առնվազն 3 օրը մեկ անգամ.

բ/ ընդհանուր օգտագործման տարածքների աղբամուղի ու աղբահավաք խցերի դեզինֆեկցիա /պայքար միջատների դեմ/ և դեռատիզացիայի /պայքար կրծողների դեմ/ իրականացում՝ առնվազն 3 ամիսը մեկ անգամ.

գ/ ընդհանուր օգտագործման և շենքի շինության սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանող տարածքների սանիտարական մաքրում՝ առնվազն 2 օրը մեկ անգամ

դ/ վերանորոգման աշխատանքների իրականացում, որոնց չիրականացումը կարող է կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին:

Վերանորոգված աշխատանքների իրականացման ժամկետները որոշվում են շենքի ընդհանուր օգտագործման գույքի տեխնիկական վիճակի տեսողական զննման,անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների հիման վրա:

Ընդ որում, վթարային բնույթի այն վնասվածքներն ու անսարքությունները,որոնք կարող են ուղղակի վտանգ ներկայացնել, անհապաղ պետք է վերացվեն: Ուղղակի վտանգի փաստը պետք է հաստատվի տվյալ բնագավառում պետական լիազորված մարմնի կողմից.

ե/ բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրությունները կատարվում են պարբերաբար, բայց ոչ ուշ, քան յուրաքանչյուր 10 տարին մեկ անգամ:

4. Բնակելի ֆոնդի շենքերի ոչ բնակելի տարածքների վարձավճարները սահմանել տարեկան 1 քմ ընդհանուր մակերեսի համար

ա) առևտրական կազմակերպություններ՝ 1200 դրամ

բ) հասարակական և արտադրական կազմակերպություններ՝ 1200 դրամ
գ) բյուջետային կազմակերպություններ՝ 840 դրամ

5. Համայնքի տարածքում մշտական կամ վարձակալությամբ հանձնված հողատարածքներում տեղադրված կրպակների կամ կառուցված շինությունների շրջակա տարածքներից աղբահանության համար ամսական վարձավճար սահմանել՝

ա/ մինչև 10քմ տարածք զբաղեցնողներից ամսական՝ 1000 դրամ
բ/ 10 – 50 քմ՝ 2000 դրամ
գ/ 50 քմ և ավելի՝ 3000 դրամ

6. „Իջևանի միջնակարգ երաժշտական դպրոց" ՓԲԸ և „Ավանդույթ" ՓԲԸ սովորողների ուսման վճար սահմանել ամսական

ա/ 1-7 դասարանների համար ներառյալ 2000դրամ
բ/ 8-10 դասարանների համար ներառյալ 5000դրամ

7. Մանկապարտեզ հաճախող երեխաների սպասարկման վճար սահմանել ամսական 2000դրամ

8. Արվեստի դպրոց հաճախող սովորողների ուսման
ա/ պարարվեստի բաժնի վճարը սահմանել ամսական 2000դրամ
բ/ գեղարվեստի բաժնի վճարը՝ 1500 դրամ

9. Կենցաղային աղբի տեղափոխման վճար սահմանել՝
ա/ բնակչությունից 1 շնչի հաշվով ամսական 80 դրամ
բ/ կազմակերպություններից աղբի տեղափոխման վճար սահմանել՝ 1 խմ համար 2000 դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ
ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ
ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*24 օգոստոսի 2012թ. N 24-Ն*

## 4. ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ „Հողային օրենսգրքի" 76 հոդվածի համաձայն համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքային սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության են տրամադրում համայնքի ղեկավարները՝ մրցութային կարգով: Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16 -րդ հոդվածի 20-րդ կետի, վարձակալության տրամադրվող վարձավճարի չափերը և պայմանները հաստատում է համայնքի ավագանին:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Համայնքի վարչական սահմաններում վարձակալությամբ օգտագործման տրամադրվող հողատարածքների մեկնարկային տարեկան վարձավճար սահմանել 1 քմ մակերեսի համար 15 դրամի չափով II գոտում, 20 դրամի չափով I գոտում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՑՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

## ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N 25-Ն*

**5.ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ „Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն Իջևանի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող տարածքներին աճուրդային վաճառք կազմակերպելու համար անհրաժեշտ է սահմանել մեկնարկային գին, որի համար

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Ոչ բնակելի մակերեսների աճուրդային վաճառքի մեկնարկային գին հաստատել 1 քմ ընդհանուր մակերեսի համար 10000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՄՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N*26-Ն

**6.ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05.06.2012Թ ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ համայնքի ավագանու 05.06.2012թ թիվ 3-Ն որոշումը ուղարկվել է փորձաքննության ՀՀ արդարադատության նախարարություն: Նախարարության 14.08.2012թ թիվ 10/4936-12 գրությամբ առաջարկվել է Իջևան համայնքի ավագանու 05.06.2012թ թիվ 3 որոշումը լրամշակել այն համապատասխանեցնելով ՀՀ օրենսդրության պահանջներին:

Նկատի ունենալով վերոհիշյալը և այն հանգամանքը, որ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին, ինչպես նաև համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հաստատելու մասին համայնքի ավագանին ընդունել է նոր լրամշակված որոշումներ, ղեկավարվելով „Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի, 1-ին ենթակետով

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Ուժը կորցրած ճանաչել Իջևան համայնքի ավագանու 05.06.2012թ „ Իջևան համայնքի տարածքում 2012թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին" թիվ 3-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՑՅԱՆ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

*24 օգոստոսի 2012թ. N 27*

## 7. ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ համայնքի տարածքում գործող առևտրի և սպասարկման օբյեկտների, ինչպես նաև տրանսպորտի և կապի ծառայությունների աշխատանքների կազմակերպումը բարելավելու, տեղական տուրքերի և վճարների հավաքագրումը կանոնակարգելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կատարել քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային փոփոխություններ և ստեղծել նոր՝ առևտրի, տրանսպորտի, կապի և սպասարկումների բաժին:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և առաջնորդվելով քաղաքապետարանի կանոնադրությամբ համայնքի ղեկավարը ավագանու հավանությանն է ներկայացնում Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունը:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին /կցվում է հավելված 1/:
2. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ հաստատել քաղաքապետարանի աշխատակազմի նոր կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը/կցվում են հավելված 2 և 3/:
3. Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով դիմել ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԱՇՈՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի անվանացանկում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Ուժը կորցրած ճանաչել անվանացանկի

1/ համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 3-րդ ենթախմբի 4-րդ կետը.

2/ համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի 7-րդ կետը.

3/ համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների երրորդ ենթախմբի 3-րդ, 6-րդ և 7-րդ կետերը:

2. Անվանացանկի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, տրանսպորտի, կապի և սպասարկումների բաժնի պետ»:

3. Անվանացանկի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 10-րդ կետով.

«10. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, տրանսպորտի, կապի և սպասարկումների բաժնի գլխավոր մասնագետ».

4. Անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների առաջին ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 11-րդ կետով.

«11. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, տրանսպորտի, կապի և սպասարկումների բաժնի առաջատար մասնագետ»:

5. Անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների երրորդ ենթախումբը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 10-րդ, 11-րդ և 12-րդ կետերով.

«10. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, տրանսպորտի, կապի և սպասարկումների բաժնի 2-րդ կարգի մասնագետ.

11. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, տրանսպորտի, կապի և սպասարկումների բաժնի 2-րդ կարգի մասնագետ.

12. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, տրանսպորտի, կապի և սպասարկումների բաժնի 2-րդ կարգի մասնագետ»:

Հավելված 2

ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատակազմը կազմված է 4 բաժիններից՝

**Առանձնացված ստորաբաժանում**

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Իջևանի տարածքային բաժին

**Կառուցվածքային ստորաբաժանումներ**

2. Ֆինանսական բաժին
3. Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին
4. Առևտրի, տրանսպորտի, կապի և սպասարկումների բաժին

Հավելված 3

## ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

**Աշխատակիցների թվաքանակը` 46**

| ՀՀ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը/ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| | ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ | | |
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 250000 |
| | ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 200000 |
| 4 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 160000 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 5 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 180000 |
| | *Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում* | | |
| | *ՔԿԱԳ Իջևանի տարածքային բաժին* | | |
| 6 | Բաժնի պետ | 1 | 147000 |
| 7 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 54000 |
| | *Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ* | | |
| | *Ֆինանսական բաժին* | | |
| 8 | Բաժնի պետ | 1 | 147000 |
| 9 | Գլխավոր մասնագետ | 1 | 128000 |
| 10 | Առաջատար մասնագետ | 1 | 100000 |
| 11 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 80000 |
| | *Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին* | | |
| 12 | Բաժնի պետ | 1 | 147000 |
| 13 | Գլխավոր մասնագետ -ճարտարապետ | 1 | 128000 |
| 14 | Առաջատար մասնագետ | 2 | 100000 |
| 15 | 1-ին կարգի մասնագետ | 1 | |
| | *Առևտրի, տրանսպորտի, կապի և սպասարկման բաժին* | | |
| 16 | Բաժնի պետ | 1 | 147000 |
| 17 | Գլխավոր մասնագետ | 1 | 128000 |
| 18 | Առաջատար մասնագետ | 1 | 100000 |
| 19 | 2-րդ կարգի մասնագետ | 3 | 65000 |
| | *Աշխատակազմի մասնագետներ* | | |
| 20 | Գլխավոր մասնագետ | 4 | 128000 |
| 21 | Առաջատար մասնագետ | 3 | 100000 |
| 23 | 1-ին կարգի մասնագետ | 4 | 80000 |
| 24 | 2-րդ կարգի մասնագետ | 4 | 65000 |
| | ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ | | |
| 25 | Քարտուղարուհի | 1 | 65000 |
| 26 | Խմբագիր | 1 | 77000 |
| 27 | Անասնաբույժ | 1 | 40000 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 28 | Վարորդ | 1 | 65000 |
| 29 | Պարետ | 1 | 55000 |
| 30 | Էլեկտրիկ | 1 | 41000 |
| 31 | Հավաքարար | 1 | 51000 |
| 32 | Ավտոբուսի վարորդ | 1 | 38000 |
| | Ընդամենը | 46 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N*28 - Ն

**8. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի 2012թ բյուջեի համամասնությունների պահպանման նպատակով անհրաժեշտություն է առաջացել բյուջեի վարչական մասում կատարել վերաբաշխումներ 2000.0 հազար դրամի:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Քաղաքապետարանի պահպանման ծախսերի 01.01.01.51 բաժնի 4111 հոդվածից 2000.0 հազ. դրամ, որից 1300.0 հազ. դրամ հատկացնել 05.01.01.51 բաժնի 4264 հոդվածին, 700 հազ.դրամ հատկացնել 10.07.01.51 բաժնի 4729 հոդվածին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՑՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N*29 - Ն

## 9. ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ „ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ"ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ „ԲԵԼՈՌՈՒՍ" ԷՕ -2621 ՄԱԿՆԻՇԻ ԷՔՍԿԱՎԱՏՈՐ ՁԵՌՔԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ համայնքի տարածքի սանիտարական մաքրման, աղբահեռացման և բարեկարգման աշխատանքները բարելավելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել „Բելոռուս " ԷՕ -2621 մակնիշի էքսկավատոր և հիմնարկի հաստիքացուցակում կատարել փոփոխություններ՝ ավելացնել վարորդի և բանվորի մեկական հաստիքներ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և 32-րդ հոդվածի 5-րդ կետով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է՝***

1. „Բելոռուս" ԷՕ -2621 մակնիշի էքսկավատոր ձեռքբերելու համար համայնքի 2012թ ֆոնդային բյուջեից հատկացնել 3մլն. 700 հազար դրամ:
2. „Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն" բյուջետային հիմնարկի հաստիքացուցակում ավելացնել վարորդի 1 հաստիք՝ 51 հազար դրամ դրույքաչափով և բանվորի 1 հաստիք 51՝ հազար դրամ դրույքաչափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱՔԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ [illegible] ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N30 - Ն*

**10.ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ անհրաժեշտություն է առաջացել քաղաքապետարանի համար ձեռք բերել 950 հազար դրամի գույք:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Քաղաքապետարանի գույքի ձեռքբերման համար համայնքի 2012թ ֆոնդային բյուջեում կատարել համապատասխան փոփոխություն՝ 950 հազար դրամ 5113 հոդվածից տեղափոխել 5122 հոդված:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՄՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N* 31-Ն

**11.ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ „ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ" ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ համայնքի կանաչապատ տարածքների, զբոսայգիների ձևավորման և բարեկարգման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել համապատասխան գործիքներ:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1.Կանաչապատ տարածքների, զբոսայգիների ձևավորման և բարեկարգման գործիքների ձեռքբերման համար համայնքի 2012թ ֆոնդային բյուջեից 04.05.01.51 բաժնի 5113 հոդվածից կրճատել 250.0 հազար դրամ և հատկացնել 05.01.01.51 բաժնի 5122 հոդվածին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ[illegible] ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N*32

## 12.ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԵՀՐԱԲՅԱՆ 42 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԱՆՁԱՏՈՒՆՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևանի համայնքի ավագանին նշում է,որ քաղաքապետարան է դիմել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարար վարչությունը՝ Իջևան քաղաքի Մեհրաբյան 42 հասցեում գտնվող Մարիետա Աղաբեկի Բեկնազարյանին պատկանող վթարավտանգ տան խնդրի կապակցությամբ: Տունը 13x4քմ արտաքին չափերով է, մեկ հարկանի, կառուցվել է 1977թ.: Տան հետևի հողազանգվածի փլվածքի հետևանքով կրող պատերի վրա առաջացել են ուղղաձիգ ճաքեր, հատակը, փայտյա առաստաղը և դռները ձևախախտվել են:

Հաշվի առնելով, որ առանձնատան հետագա շահագործումը խիստ վտանգավոր է, իսկ տան սեփականատերը 1-ին կարգի հաշմանդամ է և ի վիճակի չէ կատարել տան ամրացում, հիմնանորոգում,

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Մեհրաբյան 42 հասցեում գտնվող առանձնատան ամրացման և հիմնանորոգման նպատակով որպես ֆինանսական աջակցություն հատկացնել 700 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԱՋԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N 33*

## 13.,,ՔԱՈՒՆԹԵՐՓԱՐԹ" ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ ,,Քաունթեփարթ" ինտերնեյշնլ հայաստանյան կազմակերպության կողմից առաջարկություն է արվել իրականացնել Իջևան քաղաքի Անկախության, Երիտասարդական խաչմերուկներում լուսացույց տեղադրելու, Երևանյան փողոցում ԵՊՀ-ի հետիոտն անցման նշագծման և զգուշացնող /թարթող լուսացույցի տեղադրման/, Սահմանադրության հրապարակում /մարզպետարանի դիմաց/ շրջանաձև երթևեկությունը կարգավորող կառույցի և նշանների տեղադրման, Վասիլյան-Մետաղագործների խաչմերուկում երթևեկությունը կարգավորող նշանների, Անկախություն-Վասիլյան գործող շրջանաձև երթևեկությունը կարգավորող նշանների տեղադրման ծրագիր: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 10մլն դրամ, որից՝ համայնքի ներդրումը 3մլն 800 հազար դրամ է, այդ թվում՝ 300 հազար դրամ՝ նախագծանախահաշվային աշխատանքների արժեքը:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է՝***

1. Իջևան քաղաքի վերոհիշյալ փողոցների երթևեկությունը կարգավորող նշանների և լուսացույցների տեղադրման աշխատանքները կատարելու համար համայնքի 2012թ. բյուջեից հատկացնել 3մլն 800 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆ[illegible] ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N*34

14. „ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ" ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևանի քաղաքապետի 17.08.2012թ., թիվ 37 կարգադրության համաձայն „Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն" հիմնարկի տնօրենի պաշտոնակատար է աշխատում Սուրեն Սամվելի Չիբուխչյանը: Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի թիվ 32 հոդված 9-րդ կետով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ „Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն" հիմնարկի տնօրեն նշանակել Սուրեն Սամվելի Չիբուխչյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

## ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N 35*

### 15. ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻ ՇԱՐՔ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի մի շարք փողոցներ դեռևս չունեն լուսավորության ցանց: Անհրաժեշտություն է առաջացել Երևանյան փողոցի հարավային մուտքի, Մետաղագործների փողոցի դեպի անհատական տնտատիրություններ տանող փողոցի, Պռոշյան, Սպանդարյան փողոցներում իրականացնել արտաքին լուսավորության ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Իջևան համայնքի Երևանյան փողոցի հարավային մուտքի, Մետաղագործների փողոցի դեպի անհատական տնտատիրություններ տանող փողոցի, Պռոշյան, Սպանդարյան փողոցների լուսավորության ցանցերի հիմնանորոգման նպատակով համայնքի ֆոնդային բյուջեից հատկացնել 3մլն 100 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա | ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա |
| ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ | ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ |
| ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ | ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա |
| ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ |
| ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա | |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

### Իջևան քաղաքային համայնքի ավագանի

## ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N 36*

16. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԻՎ 7 ՇԵՆՔԻ ԹԻՎ 42 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Երիտասարդական փողոցի թիվ 7 շենքի, թիվ 42 բնակարանը հանդիսանում է համայնքի սեփականությունը:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետը և հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ բնակարանում փաստացի բնակվում են և կարգապահ վարձակալներ են հանդիսանում Վալոդյա Ջհանի Փաշինյանի, Արմեն Վալոդյայի Փաշինյանի, Էմմա Վալոդյայի Փաշինյանի ընտանիքը, որոնք ժամանակին չեն կարողացել սեփականաշնորհել բնակարանը.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Երիտասարդական փողոցի թիվ 7 շենքի, թիվ 42 բնակարանը անհատույց օտարել նույն բնակարանում փաստացի բնակվող՝ Վալոդյա Ջհանի Փաշինյանի, Արմեն Վալոդյայի Փաշինյանի, Էմմա Վալոդյայի Փաշինյանի ընտանիքին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

### Իջևան քաղաքային համայնքի ավագանի

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*24 օգոստոսի 2012թ. N 37*

**17.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20 ՇԵՆՔԻ ԹԻՎ 14 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 20 շենքի, թիվ 14 բնակարանը հանդիսանում է համայնքի սեփականությունը:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետը և հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ բնակարանում փաստացի բնակվում են և կարգապահ վարձակալներ են հանդիսանում Նարինե Բախչագուլյանի, Վեներա, Հրանտ և Արգամ Շախբաթյանների ընտանիքը, որոնք ժամանակին չեն կարողացել սեփականաշնորհել բնակարանը

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 20 շենքի, թիվ 14 բնակարանը անհատույց օտարել նույն բնակարանում փաստացի բնակվող՝ Նարինե Բախչագուլյանի, Վեներա, Հրանտ և Արգամ Շախբաթյանների ընտանիքին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ [signature]

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ [signature]

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ [signature]

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ [signature]

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ [signature]

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ [signature]

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

## Իջևան քաղաքային համայնքի ավագանի

## ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N 38*

**18.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 11 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցի թիվ 11 շենքի, թիվ 4 բնակարանը հանդիսանում է համայնքի սեփականությունը:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետը և հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ բնակարանում փաստացի բնակվում.են և կարգապահ վարձակալներ են հանդիսանում Նարինե Աիդա Եգանյանի, Վրեժ, Միեր և Տիգրան Բուղդարյանների ընտանիքը, որոնք ժամանակին չեն կարողացել սեփականաշնորհել բնակարանը.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցի թիվ 11 շենքի, թիվ 4 բնակարանը անհատույց օտարել նույն բնակարանում փաստացի բնակվող՝ Նարինե Աիդա Եգանյանի, Վրեժ, Միեր և Տիգրան Բուղդարյանների ընտանիքին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*24 օգոստոսի 2012թ. N 39*

**19.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԼԲՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 73 ՇԵՆՔԻ ԹԻՎ 36 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 73 շենքի, թիվ 36 բնակարանը հանդիսանում է համայնքի սեփականությունը:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետը և հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ բնակարանում փաստացի բնակվում են և կարգապահ վարձակալներ են հանդիսանում Գոհար Էդիլյանի, Ռանիկ, Սուսաննա և Սասուն Բաղրամյանների ընտանիքը, որոնք ժամանակին չեն կարողացել սեփականաշնորհել բնակարանը.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 73 շենքի, թիվ 36 բնակարանը անհատույց օտարել նույն բնակարանում փաստացի բնակվող՝ Գոհար Էդիլյանի, Ռանիկ, Սուսաննա և Սասուն Բաղրամյանների ընտանիքին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*24 օգոստոսի 2012թ. N 40*

**20. ԻՋԵՎԱՆԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ՆՈՐ ԽՈՒՄԲ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համայնքի ավագանին նշում է, որ ավելացել է թիվ 5 մանկապարտեզ հաճախող երեխաների թվաքանակը, ուստի անհրաժեշտություն է առաջացել բացել նոր խումբ՝ և հաստիքացուցակում ավելացնել դաստիարակի, դայակի և խոհարարի մեկական հաստիքներ:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և 32-րդ հոդվածի 5-րդ կետով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է՝***

1. Թիվ 5 մանկապարտեզում բացել նոր խումբ:
2. Թիվ 5 մանկապարտեզի հաստիքացուցակում ավելացնել դաստիարակի, դայակի և խոհարարի մեկական հաստիքներ՝ համապատասխան դրույքաչափերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱՁԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N 41*

## 21. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՂԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ ձմռան սեզոնում ճանապարհները սառցակալումներից և ձյունից մաքրելու համար անհրաժեշտ է 10տ տեխնիկական աղ: Ձեռքբերման և տեղափոխման համար անհրաժեշտ է 350 հազար դրամ:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է՝***

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ համայնքի 2012թ վարչական բյուջեից հատկացնել 350 հազար դրամ՝ տեխնիկական աղի ձեռքբերման և տեղափոխման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N42*

## 22. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ անհրաժեշտություն է առաջացել Իջևանի մշակույթի տան հաստիքացուցակում կատարել հաստիքային փոփոխություն՝ կրճատել մեթոդիստի 1 հաստիք:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և 32-րդ հոդվածի 5-րդ կետով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է՝***

1.Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևանի մշակույթի տան հաստիքացուցակում կրճատել մեթոդիստի 1 հաստիք:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՄՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

## ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N43*

### 23. ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ անհրաժեշտություն է առաջացել Իջևանի թիվ 1 մանկապարտեզի հաստիքացուցակում կատարել հաստքիային փոփոխություն՝ կրճատել հոգեբանի հաստիքը:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և 32-րդ հոդվածի 5-րդ կետով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է՝***

1.Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևանի Իջևանի թիվ 1 մանկապարտեզի հաստիքացուցակում կրճատել հոգեբանի հաստիքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ [illegible] ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

## Իջևան քաղաքային համայնքի ավագանի

## ՈՐՈՇՈՒՄ

*24 օգոստոսի 2012թ. N 44*

### 24.ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություններ են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին:

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը՝ համաձայն աղյուսակի.

| ՀՀ | Նպատակը | Հասցե | Մակերես՝ քմ |
|---|---|---|---|
| 1. | Բնակ. կառ. | Մետաղագործների խճ. | 400 |
| 2. | Բնակ. կառ. /ավտոտնակ/ | Բլբուլյան | 32 |
| 3. | Հաս. կառ. /ընդլայնում/ | Երևանյան | 12 |
| 4. | Հաս. կառ. /զովազդ/ | Արցախյան | 1.0 |
| 5. | Հաս. կառ. /զովազդ/ | Երևանյան | 2x1 |
| 6. | Հաս. կառ. | Աբովյան | 45 |
| 7. | Հաս. կառ. | Վասիլյան | 51.7 |
| 8. | Հաս. կառ. | Վասիլյան | 126.0 |
| 9. | Հաս. կառ. | Անկախության | 78 |
| 10. | Բնակ. կառ. Ավտոտնակ | Բլբուլյան | 19.8 |
| 11. | Բնակ. կառ. Ավտոտնակ | Անկախության | 19.8 |
| 12. | Հաս. կառ. Ինքնակամ | Երևանյան | 40.2 |
| 13. | Բնակ. կառ. Ավտոտնակ | Բլբուլյան | 19.8 |
| 14. | Բնակ. կառ. Ավտոտնակ | Աբովյան | 19.8 |
| 15. | Բնակ. կառ. Ավտոտնակ | Անկախության | 19.8 |
| 16. | Հաս. կառ. /ընդլայնում/ | Աբովյան | 9.2 |
| 17. | Հաս. կառ. | Անկախության | 19.9 |

| | | | |
|---|---|---|---|
| 18. | Ոչ բնակելի տարածք | Սպանդարյան | 19.2 |
| 19. | Հաս. կառ. /ինքնակամ/ | Երևանյան | 31.7 |
| 20. | Բնակ. կառ./ինքնակամ ավտոտնակ / | Բլբուլյան | 39.9 |
| 21. | Բնակ. կառ. /ինքնակամ ավտոտնակ/ | Անկախության | 41.98 |
| 22. | Գյուղ նշանակություն /ինքնակամ/ | Երևանյան | 500/23.04 |
| 23. | Բնակ. կառ./ինքնակամ ավտոտնակ/ | Աբովյան | 21.5 |
| 24. | Բնակ. կառ./ինքնակամ ավտոտնակ/ | Աբովյան | 24 |
| 25. | Բնակ. կառ. | Նար-Դոս | 700 |
| 26. | Բնակ. կառ./ինքնակամ ավտոտնակ/ | Անկախության | 38.4/22.08 |
| 27. | Բնակ. կառ. | Բլբուլյան | 30 |
| 28. | Հաս. կառ. /ինքնակամ/ | Երևանյան | 16.48 |
| 29. | Բնակ. կառ. /ընդլայնում/ | Նար-Դոս | 150 |
| 30. | Հաս. կառ. | Անկախության | 8.39 |
| 31. | Հաս. կառ. /ինքնակամ/ | Աբովյան | 21.2 |
| 32. | Հաս. կառ. | Արցախյան | 2599 |
| 33. | Հաս. կառ. | Արցախյան | 2199 |
| 34. | Հաս. կառ. | Երևանյան | 150 |
| 35. | Գյուղ նշանակության | Նար-Դոս | 1000 |
| 36. | Հաս. կառ. | Երևանյան | 243.3 |
| 37. | Բնակ. կառ./ինքնակամ ավտոտնակ/ | Բլբուլյան | 28.4 |
| 38. | Բնակ. կառ. | Չարենցի 29 | 148.5 |
| 39. | Հաս. կառ. /ինքնակամ/ | Իջևանյան | 6.6/9.9 |
| 40. | Բնակ. կառ./ինքնակամ ավտոտնակ/ | Բլբուլյան | 31.9 |
| 41. | Հաս. կառ. | Վալանս | 150 |
| 42. | Հաս. կառ. | Թատերական | 27.55 |
| 43. | Հաս. կառ. | Վասիլյան | 4 x19.8 |
| 44. | Հաս. կառ. | Երևանյան | 607.18 |
| 45. | Հաս. կառ. | Երևանյան | 566.22 |
| 46. | Գյուղ նշանակության | Երևանյան | 4900 |
| 47. | Բնակ. կառ. | Մետաղագործների | 263.2 |
| 48. | Բնակ. կառ. | Նալբանդյան | 400 |
| 49. | Բնակ. կառ | Ազատամարտիկներ | 18 |
| 50. | Բնակ. կառ | Արցախյան | 18 |
| 51. | Բնակ. կառ /ինք.ավտո/ | Աբովյան | 21 |
| 52. | Բնակ. կառ | Աբովյան | 19.55 |
| 53. | Բնակ. կառ /ինք.ավտո/ | Անկախության | 29.64 |
| 54. | Ոչ բնակ տարածք | Անկախության | 44.3 |
| 55. | Բնակ. կառ | Մեհրաբյան 2-րդ նրբ տ 10 | 170.7 |
| 56. | Հաս. կառ./ինք./ | Աբովյան | 93.36/41.35,8.36 |
| 57. | Բնակ. կառ /ինք./ | Աբովյան | 14.58 |
| 58. | Բնակ. կառ | Բլբուլյան | 22.4քմ |
| 59. | Հաս.կառ | Արցախյան | 1090.8 |
| 60. | Բնակ կառ | Բլբուլյան | 17.9 |
| 61. | Հաս կառ | Արցախյան | 3x29.6քմ |
| 62. | Հաս կառ | Աբովյան | 19.8 |
| 63. | Հաս կառ | Արցախյան 38 | 336.0 |

| | | | |
|---|---|---|---|
| 64. | Հաս կառ | Արովյան | 9.0 |
| 65. | Հաս կառ /ավտոտնակ/ | Մետաղագործների | 1640 |
| 66. | Բնակ կառ | Մայիսի 28 | 4x19.8 |
| 67. | Հաս կառ /ավտոտնակ/ | Երևանյան | 188.2 |
| 68. | Հաս կառ | Մետաղագործների խճ | 114.4 |
| 69. | Հաս կառ /զուգարան/ | Վալանս | 19.8 |
| 70. | Հաս կառ /զուգարան/ | | 19.8 |
| 71. | Բնակ կառ | Նալբանդյան | 400 |
| 72. | Հաս կառ | Երևանյան | 60.0 |
| 73. | Հաս կառ | Բլբուլյան | 3x19.8 |
| 74. | Հաս կառ /անհ.օգտ/ | Նալբանդյան | 400.0 |
| 75. | Բնակ կառ | Երիտասարդական | 19.8 |
| 76. | Հաս կառ/զուգարան/ | Երևանյան | 19.8 |
| 77. | Հաս կառ | Երևանյան | 90.0 |
| 78. | Հաս կառ/ինքն/ | Անկախության | 45.0 |
| 79. | Բնակ կառ /ավտոտնակ/ | Բլբուլյան | 2x18 |
| 80. | Հաս կառ/ընդ/ | Անկախության | 38.1 |
| 81. | Հաս կառ | Անկախության | 10 |
| 82. | Բնակ կառ /ընդ/ | Մետաղագործների | 650 |
| 83. | Բնակ կառ | Անկախություն | 12.0 |
| 84. | Բնակ կառ | Մետաղագործների | 400 |
| 85. | Բնակ կառ /ինք/ | Սպանդարյան | 28/105.3 |
| 86. | Բնակ կառ | Սպանդարյան | 79.3 |
| 87. | Բնակ կառ | Նալբանդյան | 18.0 |
| 88. | Հաս կառ | Երիտասարդական | 15 |
| 89. | Արտադրական նշան. | Արցախյան | 2969 |
| 90. | Հաս կառ /ինք. սրճարան/ | Անկախության | 95/633.6 |
| 91. | Հաս կառ /ինք. առևտրի սրահ/ | Անկախության | 18.8/168 |
| 92. | Բնակ կառ | Ասալյան 130 | 212 |
| 93. | Հաս կառ /ինք/ | Երևանյան | 52/171.2 |

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ- բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ- բացակա

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ- բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ- բացակա

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ